# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հոկտեմբերի 2023 թվականի N 1696 - Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ կետով և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի փետրվարի 10-ի N 110-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Համաձայնություն տալ Սիմոնյան կրթական հիմնադրամի և Մասիսի համայնքապետարանի միջև 2022 թվականի հուլիսի 6-ին կնքված Թումո կենտրոն կառուցելու նպատակով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի Հանրապետության փողոց 73/6 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.70815 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը Սիմոնյան կրթական հիմնադրամին նվիրաբերությամբ տրամադրելուն:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված Թումո կենտրոնի կառուցման ծրագրի շրջանակներում հողամասն անհատույց սեփականության

իրավունքով նվիրաբերությամբ տրամադրելու գործարքների հիմնական պայման-ները՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին՝ նվիրաբերության պայմանագիրը կնքելու պահից երեք տարվա ընթացքում, ծրագիրը չիրականացնելու դեպքում ներկայացնել առաջարկություն սույն որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, իսկ Մասիս համայնքի ղեկավարին առաջարկել լուծել Սիմոնյան կրթական հիմնադրամի հետ կնքված պայմանագիրը:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավարին նվիրաբերության պայմանագրում նախատեսել դրույթ, համաձայն որի ծրագիրը սահմանված ժամկետում չիրականացնելու դեպքում՝ պայմանագիրը լուծելուց հետո հողամասը և դրա վրա առկա անշարժ գույքերը սեփականության իրավունքով անցնում են համայնքին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

05.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ